

ՍԱՂՄՈՍ 124

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիներից ազատվելու համար աղոթք	ՏԵՐԸ Իր ժողովրդի Պաշտպանը	Ազգի փրկության համար գոհություն	Աստված Իր ժողովրդի պահապանը	Իսրայելի Փրկիչը
<u>MT ներածություն</u> Դավթի աստիճանների երգ				
124:1-5	124:1-5	124:1-5	124:1 124:2-5	124:1-3 124:4-5
124:6-8	124:6-8	124:6-7 124:8	124:6-8	124:6-7 124:8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 124:1-5</p> <p>¹Եթե ՏԵՐԸ մեզ հետ չլինեք, հիմա թող ասի Իսրայելը, ²Եթե ՏԵՐԸ մեզ հետ չլինեք, երբ մարդիկ մեզ վրա բարձրացան, ³Այն ժամանակ մեզ անմիջապես կույ էին տալու, Երբ նրանց զայրույթը բորբոքված էր մեզ վրա: ⁴Այն ժամանակ ջրերը մեզ ընկղմելու էին, Հեղեղն անցնելու էր մեր անձերի վրայով. ⁵Ապա գոռոզ ջրերը մեր անձերի վրայով էին անցնելու:</p>

124:1-5 Սա պատարագային պարբերությունն է՝ կապված օտար զավթիչներից Իսրայել ազգի ազատագրման հետ (այսինքն՝ «մարդիկ մեզ վրա բարձրացան»): Ստույգ պատմական միջավայրը սահմանված չէ:

Սաղմոսներգուն օգտագործում է հզոր նկարագրություն, որպեսզի փոխանցի ՅԱՀՎԵԻ փրկությունը՝ ազատագրումը:

1. Նա նրանց կողմից է, Սաղմ. 124:2

2. թշնամին կուլ տված կլիներ Իսրայելին, Սաղմ . 124:3ա
3. թշնամու գայրույթը բորբոքված էր Իսրայելի վրա, Սաղմ . 124:3բ
4. թշնամին հեղեղի պես անցնելու էր Իսրայելի վրայով, Սաղմ . 124:4-5

124:1 «Հիմա թող ասի Իսրայելը» Սա *Qal* ԱՆԿԱՏԱՐ է՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով: Պատասխանը պետք է մեջբերված լիներ ազգային հաղթանակի տոնակատարության ժամանակ (տես՝ Սաղմ . 129:1):

124:3ա Այս «կուլ տալու» նկարագրությունը (BDB 118, KB 134) գալիս է՝

1. երկրի անձնավորումից (այսինքն՝ մահը, *Շեռլը*, տես՝ Ելից 15:12) կուլ է տալիս ապստամբ Ղևտացիներին՝ անապատում դեզերումի ժամանակ (տես՝ Թվոց 16:30, 32, 2 Օրինաց 11:6):
2. գիշատիչ գազանի հարձակումը (տես՝ Սաղմ . 35:25, Առակ . 1:12, Ամովս 2:16), սա հատկապես նշվում է Սաղմ . 124:6բ-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՇԵՈՒ

124:3բ Բարկության նկարագրությունը որպես բորբոքված առաջին անգամ կիրառվում է Ծննդ . 39:19-ում: Կրակը հաճախ կիրառվում է որպես նկարագրություն՝

1. դատաստանի համար
2. բարկության համար
3. մաքրելու համար

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԿՐԱԿ

124:4-5 Ջրի՝ հեղեղի նկարագրությունը որպես կյանքի խնդիրներ, պարբերաբար կրկնվում է ՀԿ-ում (այսինքն՝ Հոր 22:11, 38:34, Սաղմ . 32:6, 66:12, 69:2, 144:7, Եսայի 43:2, Ողբ 3:54): Այն կիրառվում է Եսայի 8:7-8 և Երեմ . 51:34-ում հարձակման՝ նվաճման համար, ինչպես այս Սաղմոսում: Ինչպես որ ջրհեղեղի ջրերը ծածկում են երկիրը, այնպես էլ գավթիչների գործը: Այս բանի համար կիրառվող մյուս տարածված փոխաբերություններից է մարախների ներխուժումը (այսինքն՝ Հովել):

Երբ որ ջուրը դիտարկվում է որպես մարդկության թշնամի, այդտեղ հավանաբար ակնարկվում է ջրի քառսի պարտությունը ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ . 29:3,10, 74:12-17, 89:9-10, 93:3-4): Սա ՅԱՀՎԵԻ մասին որպես արարիչ թեմայի մի մասն է (տես՝ Սաղմ . 124:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՋՐԵՐ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 124:6-8
⁶Օրհնյալ լինի ՏԵՐԸ, որ մեզ նրանց առամներին որս չտվեց:
⁷Մեր անձերը թռչնի պես որսորդների թակարդից դուրս պրծան .
Թակարդը կոտրվեց, ու մենք ազատվեցինք:
⁸Մեր օգնությունը ՏԻՐՈՋ անունով է,
Ով երկինքն ու երկիրը ստեղծեց:

124:6-8 ՅԱՀՎԵՆ օրհնյալ է (BDB 138, KB 159, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) Իսրայել ազգին փրկելու համար: Փրկությունը բնութագրվում է որպես՝

1. փախուստ գիշատիչ գազանից (այսինքն՝ Սաղմ . 7:2)
2. փախուստ թռչնի որսորդից՝ ծուղակ սարքողից (տես՝ Սաղմ . 91:3, 119:110, Առակ . 6:5)

124:7ա «անձ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

124:7բ Հնարավոր է հարց առաջանա, թե արդյո՞ք բանաստեղծության այս տողի նպատակն է հարձակվող գորքի կործանման մասին տեղեկացնելը:

124:8ա Անունը խոսում է անձի մասին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

124:8բ Սա սահմանված արտահայտություն է (տես՝ Սաղմ . 102:25, 121:2, 124:8, 134:3, 146:6), որը հաստատում է Իսրայելի Աստծո բացառիկությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ: